Սույն գործով դատական ծախսերը կազմված են 60.000 ՀՀ դրամի չափով վճարված պետական տուրքի և փաստաբանի խելամիտ վարձատրության գումարներից:

Ինչպես հետևում է հայցադիմումից և գործի նյութերից՝ հայցվորի ներկայացուցիչը պահանջ կամ գրավոր միջնորդություն չի ներկայացրել դատական ծախսերը բռնագանձելու մասին:

Հետևաբար՝ նման պայմաններում Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերության հայցը բավարարել:

Անվավեր ճանաչել «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊ ընկերության միջև 04.01.2024 թվականին կնքված թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» և 10.01.2024թ.-ին կնքված թիվ «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3» ծածկագրերով պայմանագրերի միակողմանի լուծումը:

Դատարանի 29.04.2024թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և այն կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am